

ԾՈՎԱԼԱԳՍԸ

ՅԱՅԳԱՆՈՒԱԳ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՏԱՃԱՐԻՆ - SALUTE

Յընորական լոյս և երազ կապուտակ,
 Կը ծըփայ ծոփն անյատակ.
 Քըրմանոյշներ ջուրին վըրայ ոսկեմազ
 Կը կաքաւեն հեզանազ:
 Նոր հարսի պէս եկեղեցին հերարձակ
 Կը վերանայ ըսպիտակ.
 Ու վենետեան շալն յեղեղուկ ծոպերով
 Ուսէն կ'իյնայ հեշտանքով:
 Մայրագորով ինձ կ'երկարի բերկրագին
 Գեղեցկութեանց դիցուհին.
 Պարանոցիս շողն անցնելով մատներուն
 Եւ վարդաբոյր և նաշխուն:
 Հագար աստղեր հագար աչքեր կ'ամփոփուին
 Երկինքներէն լըճակին.
 Երամ երամ կ'երթայ լոյսի կարաւանն
 Դէպ ի տաճարն ուխտական:
 Մինչդեռ հեռուն կը մարմըրին... կը հեծէ
 Զանգակի ձայնն արծաթէ,
 Դուռը ժամին կը կարմըրի խընկաբոյր
 Ինչպէս համբոյր առ համբոյր:

Վեներտիկ - Ե - 1931

ԱՐՇԱԿԱՆԳԸ

Արշալոյս, ծագէ՛ սարերուն մէջէն
 Ուրտեղ թռչուններն ըզբեզ կը կանչեն,
 Սփռուէ՛ կեանքի և Արուեստին խոր,
 Որ քերթողն ըլլայ քեզմով լուսաւոր:

Լոյսէդ արբեցած՝ սոխակը վարդին
 Կարօտը կ'երգէ, թողած մեղեդին.
 Ոսկի կ'անձրեւեոս պուրակէ պուրակ,
 Արուեստագէտին աղբիւրն ես միակ:

Արշալոյս, ծագէ՛ մարմարին վըրան,
 Քերթողին վըրան լուսեղէն խորան,
 Քանդակագործին տո՛ւր լոյսէդ քանդակ,
 Յունաստանի փառքն ինկաւ լոյսիդ տակ:

Աթէնք, 1932 Մայիս 1

ԼԵՆԻՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

ԹՈՅԼ ՈՒ ԹԵԹԵԻ

Թոյլ ու թեթեւ վերցուցինք զայն ու տարինք
 Որպէս պոր մը երազուն
 Կուրծքին վըրայ խունկի կապոյտ պարոյրին.
 Շարականի զեփուռին մէջ օրօրուն
 Ծաղկի մը պէս առինք տարինք տրամագին:
 Ու խորհեցայ
 Թէ ինչպէս
 Յանկարծ փըրթած շարոցի
 Մետաքս թելին վըրայէն
 Մարգարիտ մը կը սահի:
 Շարականի ցօղերուն մէջ լուսագէտ
 Աստղ մ'էր նա դաւկահար.
 Մանկան կուպէն կաթած կաթին առաջին.
 Ժըպիտն էր նա երազի մը շրթունքին,
 Զոր ուսամբարծ
 Եւ անդարծ
 Արինք տարինք լաւագին...

ԿԵԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մենէ մէկուն պիտի անշուշտ վիճակուէր
 Խըմել լեղի ըմպելին այս բաժակին.
 Թէ քեզ համար չարտասուէին իմ աչեր՝
 Դըլուխըդ քու պիտի հակէր լաւագին:

Թէ ես միմիակ չըքալէի այս ճամբէն՝
 Տատասկներէն արինելով իմ ոտքեր,
 Պիտի խոցէր քեզ մենութիւնն այն ատեն
 Եւ կուրծքըդ քու ինծի համար հառաչէր:

Կը վերջիչեմ անվերջ նինջն այն երջանիկ՝
 Որ կը խըփէ աչքերըդ քու լացին դէմ,
 Ու երազն այդ՝ աստղը սրտիս մէկ հատիկ՝
 Կը պլպլայ խաւարին մէջ այս դըժխեմ:

Լեղի բաժակն ես կը խըմեմ ցըմըրուր,
 Բայց մէկ խորհուրդ պիտի յաւէտ քաղցրանայ.
 Դու կ'ըմբողջանաս խաղաղութիւն խնկաբոյր,
 Ես կը կըրեմ այս խաչը ծանր իմ վըրայ...

ՎԱՅՐԱՄ ՄՕՅՆԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳԸ

Թափառական ու մենաւոր
 Անտառին մէջ խորհրդաւոր
 Վըհատ սրտիս գոչիւնն ահա.
 «Տըխուր է կեանքն երկրիս վրայ...»
 — Պատասխանեց գանգիւնն ինձ. — Ա՛հ:

Ու սրտայոյզ ձայնս կը կրկնէ.
 — Գանգիւն, կեանքն այս չարի հէրկ է.
 Ու ինձ նորէն գանգիւնն. — Երգէ՛:

— Անտառներուն՝ գանգիւն՝ հսկայ,
 Խաչն ուսիս ծանր աւանդ գըտայ:
 Կրկնեց գանգիւնն ինձ. — Հաւատա՛:

Քէնն հոգւոյս մէջ ընծիւղ հանել
 Սկըսաւ. խնդա՛լ թէ անիծել...
 Եւ գանգիւնն ինձ ըսաւ. — Սիրելի:

Գանգիւնն հըսկայ պուրակներուն
 Տըւաւ ինծի խրատ մ'իմաստուն.
 Սիրեմ, կ'երգեմ, կը հաւատամ,
 Երջանիկ եմ երկրիս վըրան:

Թրգմ. Հ. Ե. Փ.

ԹԵՂԵՆԻ ՊԹԹՐԷԼ

ԵՐԱԶ

Կապոյտ երկինք... Կապոյտ երկինք...
 Ու կ'ելլէինք... Գինով էինք,
 Ծովափն ի վեր: Գարնանային
 Վարդի թերթեր Երազ մը սին
 Պայր են բոցեր... Մեր բոց սըրտին:

Կապոյտ երկինք... Կապոյտ երկինք...
 Նաշխուն էր ինք, Մենք խենդ էինք...
 Ու հոգիս լոյս Ու վարդենին
 Ծիւր մըն ալ յոյս Ծովափն ի վեր
 Վառ շըրթներուս: Լճու կ'արտասուէր...

Թ. ՏՈՊԱՃԵԱՆ

